

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)**

Ը.00.02. «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Յուրի Միքայելի Սուվարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Գագիկ Իշխանի Վարդանյան

տնտեսագիտության թեկնածու
Մարինե Վարդգեսի Առաքելյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի մայիսի 25-ին,
ժամը 15³⁰-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող
ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան փող., 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թվականի ապրիլի 25-ին:

014 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Ս.Ա. Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հեղազոյության թեմայի արդիականությունը: Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսական զարգացման հիմնական գործոններից մեկն է, որը նպաստում է երկրի կայուն տնտեսական առաջընթացին, շրջակա միջավայրի պահպանությանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը, աղքատության հաղթահարմանը, պատմամշակութային ժառանգության և ավանդույթների պահպանությանն ու մշակութային արժեքների արժևորմանը: Այսպես՝ 2015 թ. զբոսաշրջությունը կազմել է համաշխարհային տնտեսության ՀՆԱ 9.8%-ը կամ 7 170,2 մլրդ ԱՄՆ դոլար, ոլորտում կապիտալ ներդրումների ծավալը 4.3% է կամ 774,6 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ զբաղվածների մասնաբաժինը ընդհանուր զբաղվածության մեջ՝ 9,5% կամ 283 578,0 հազ. մարդ: Համաձայն Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության կանխատեսումների՝ զբոսաշրջիկների քանակը մինչև 2020 թվականը տարեկան կկազմի 1,4 մլրդ մարդ, իսկ 2030 թ.՝ 1,8 մլրդ մարդ¹:

Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության ժամանակակից զարգացումները՝ ՀՀ տնտեսությունը պետք է կարողանա առավելագույնս հենվել այն ճյուղերի վրա, որոնց զարգացման համար երկրում կան նպաստավոր պայմաններ, և փոխադրման նվազ ծախսեր են պահանջվում: Այդպիսի ճյուղերից է զբոսաշրջությունը: Այս համատեքստում, ՀՀ-ում զբոսաշրջությունը «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Կառավարության հավանությանն արժանացած Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով սահմանվել է որպես տնտեսության գերակա ճյուղ:

Պետական քաղաքականության և պետություն – մասնավոր հատված – սփյուռք համագործակցության շնորհիվ զբոսաշրջային այցելությունների շարժընթացը Հայաստանում դրական միտումներ է դրսևորել: 2016 թ. հունվար-դեկտեմբերին այցելությունները կազմել են մոտ 1,26 մլն մարդ, ինչը 5,7 %-ով գերազանցում է 2015 թ. ցուցանիշը²:

Վերջին տարիներին զբոսաշրջային ոլորտում ենթակառուցվածքների զարգացու-

¹ UNWTO Tourism Highlights. 2016 Edition, pp. 13-15. <http://www.e-unwto.org/doi/pdf/10.18111/9789284418145>

² Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին: http://armstat.am/file/article/sv_12_16a_421.pdf

մը, մարզերում հյուրանոցային տնտեսությունների կառուցումն և վերագործարկումը, ռեստորանային բիզնեսի ընդլայնումը, ավտոմայրուղիների բարեկարգումն ու նորերի կառուցումը, ճոպանուղիների գործարկումը լուրջ նախադրյալներ ստեղծեցին Հայաստանը որպես զբոսաշրջային գրավիչ երկիր ճանաչելի դարձնելու համար: Սակայն, պետք է նշել, որ տվյալ բնագավառում ժամանակակից հետազոտությունների հիմնական մասն ուղղված է զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավման հիմնախնդիրների ուսումնասիրությանը այն դեպքում, երբ պետական ու գործարար կառավարման հիմնախնդիրները, կառավարման կատարելագործման ուղիների բացահայտումը և ոլորտի զարգացման արդյունավետության բարձրացման գերակայությունները ևս պետք է գտնվեն ուշադրության կենտրոնում: Հարկ է ընդգծել, որ գոյություն չունեն զբոսաշրջության ոլորտի՝ որպես տնտեսության ճյուղի պետական կառավարման միասնական մոտեցում, պետության դերակատարության միասնական հասկացություն, ինչը նվազեցնում է պետական մարմինների գործունեության արդյունավետությունը ոլորտը զարգացնելու առումով: Վերոնշյալ հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ է պայմանավորված սույն ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակը ՀՀ զբոսաշրջության ոլորտի բարելավման ուղիների, մոտեցումների մշակումն է՝ տեսամեթոդաբանական հիմնավորմամբ: Վերոնշյալ նպատակի իրականացման համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել զբոսաշրջության ոլորտի կառավարմանը վերաբերող հիմնական հայեցակարգերը,
- ուսումնասիրել զբոսաշրջության կառավարման տեսամեթոդաբանական հիմքերը,
- վերլուծել և գնահատել գլոբալացման ժամանակակից գործընթացներում զբոսաշրջության դերն ու տնտեսական նշանակությունը,
- վերլուծել զբոսաշրջության ոլորտի կառավարման միջազգային փորձը և ՀՀ-ում դրա տեղայնացման հնարավորությունները,
- բացահայտել և գնահատել ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման արդի վիճակն ու կառավարման առանձնահատկությունները,

- վերլուծել և գնահատել ՀՀ զբոսաշրջության ոլորտի կառավարման համակարգի զարգացման հնարավորություններն ու միտումները,
- ուսումնասիրել զբոսաշրջության ոլորտը կարգավորող օրենսդրաիրավական դաշտը,
- հիմնավորել զբոսաշրջության ոլորտի կառավարման կառուցակարգերի կատարելագործման ուղիները, ինչպես նաև ինստիտուցիոնալ բարեփոխումների մոտեցումները:

Հեղափոխության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ զբոսաշրջության ոլորտի կառավարման համակարգն է՝ յուրահատուկ բնութագրիչներով և առանձնահատկություններով, իսկ առարկան ՀՀ զբոսաշրջության ոլորտի կառավարման համակարգում ձևավորված կառուցակարգերի և տնտեսակազմակերպական հարաբերությունների ամբողջությունն է:

Հեղափոխության տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքն են կազմում զբոսաշրջության ոլորտի հայրենական և օտարերկրյա գիտնականների հրապարակումները և գիտավերլուծական նյութերը:

Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրվել է մասնագիտական գրականությունից, զբոսաշրջային գործունեությունը կարգավորող ՀՀ օրենսդրաիրավական ակտերից, ՀՀ ազգային վիճակագրության ծառայության, ոլորտը կարգավորող պետական կառավարման մարմինների և Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության պաշտոնական տեղեկագրերից, համացանցային աղբյուրներից:

Հեղափոխության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Հետազոտության արդյունքներն իրենց բնույթով ունեն տեսական, մեթոդական և կիրառական ուղղվածություն, որոնց գիտական նորույթը հետևյալն է.

1. Հիմնավորվել և առաջարկվել են զբոսաշրջային ձևերի զարգացման և բազմատեսականացման հնարավորությունները ՀՀ-ում, մասնավորապես՝ ագրոզբոսաշրջության, գյուղական զբոսաշրջության, էկոզբոսաշրջության և իրադարձային զբոսաշրջության տեսակները:

2. Հետազոտվել և բացահայտվել են ՀՀ ներգնա և արտագնա զբոսաշրջային ծառայությունների ծավալային և կառուցվածքային փոփոխությունների միտումները և ազդեցությունը տնտեսության զարգացման վրա:

3. Մշակվել ու առաջարկվել է զբոսաշրջային կլաստերների ձևավորման և կառավարման մոդել՝ համապատասխան կազմակերպական կառուցվածքով և կառուցակարգերով՝ միտված ՀՀ-ում զբոսաշրջության կայուն զարգացմանը:

4. Հիմնավորվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը կից Զբոսաշրջության ազգային գործակալության ձևավորման անհրաժեշտությունը, մշակվել են գործունեության նպատակը, կառավարման կազմակերպական կառուցվածքը և գործառույթները:

Հեղազոտության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը:

Ատենախոսությունում ստացված գիտական արդյունքները կարող են կիրառվել զբոսաշրջության ոլորտի արդյունավետ կառավարման նպատակով, ինչպես նաև ուսումնական գործընթացներում, իսկ ներկայացված առաջարկությունները կարող են նպաստել ՀՀ զբոսաշրջային գործունեության արդյունավետության բարձրացմանը և կառավարման կատարելագործմանը:

Հեղազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կազմակերպված պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ասպիրանտների 21-րդ և 24-րդ գիտական նստաշրջաններում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական վեց հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություն բաժնից, օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 127 էջում՝ ներառյալ գրականության ցանկը: Աշխատանքում ներառված են գծապատկերներ և աղյուսակներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել են թեմայի արդիականությունն ու հրատապությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են առարկան և օբյեկտը, ուսումնասիրության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության գիտական նորույթը, արդյունքների գործնական նշանակությունը, հետազոտության փորձարկումն ու հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Զբոսաշրջության կառավարման տեսամեթոդաբանական հիմքերը»** գլխում ներկայացվել են զբոսաշրջության դերը և նշանակությունը տնտեսական համակարգում, տրվել են զբոսաշրջության զարգացման փուլերը, ձևերը, դրական և բացասական հետևանքները: Բացահայտվել են համաշխարհային տնտեսական համակարգին զբոսաշրջության ոլորտի ինտեգրման անհրաժեշտությունն ու նախադրյալները: Հաշվի առնելով զբոսաշրջության ոլորտի կառավարման միջազգային փորձի վերլուծությունը՝ տարբերակվել են զբոսաշրջության ոլորտի կառավարման մոդելներն ու ՀՀ-ում տեղայնացման հնարավորությունները:


Ատենախոսության մեջ հանգամանորեն մեկնաբանվել են զբոսաշրջային գործունեության ձևերը, տեսակները և դրանք պայմանավորող գործոնները: Հեղինակն ընդգծում է, որ զբոսաշրջության բնութագրումները բազմազան են, և դրանք կարելի է միավորել երկու խմբում: Դրանց մի մասը նեղ մասնագիտական բնույթ ունի և դիտարկվում է որպես որոշակի խնդիրների լուծման գործիք: Սահմանումների մյուս խումբը՝ ըմբռնողականը, արտահայտում է զբոսաշրջության էությունն ամբողջությամբ: Հեղինակն առաջարկել է «զբոսաշրջություն» հասկացության ավելի ընդգրկուն սահմանում, ըստ որի՝ զբոսաշրջությունը ժամանակակից տնտեսության սոցիալական ինստիտուտ է, որն ունի ներքին կառուցվածք, փոխկապված տարրերի համակարգ և տարատեսակ գործառույթներ, որոնց միջոցով իրականացվում են մարդկանց մշտական բնակության վայրից ժամանակավոր տեղափոխություններ ճանաչողական, ժամանցային, գործնական, ֆիզիկական զարգացման, հոգևոր և այլ նպատակներով: Ատենախոսը, ուսումնասիրելով և ամփոփելով մասնագիտական գրականության մեջ առկա զբոսաշրջության տեսակները, ընդգծում է, որ դրանց դասակարգման հիմքում զբոսաշրջության նպատակն է, աշխարհագրական սկզբունքը, ֆինանսական աղբյուրները և այլն:

Ատենախոսությունում հիմնավորվել են ՀՀ-ում զբոսաշրջային ձևերի բազմատեսականացման հնարավորությունները, մասնավորապես՝ կարևորվել են ագրոզբոսաշրջությունը, գյուղական զբոսաշրջությունը, էկոզբոսաշրջությունը և իրադարձային զբոսաշրջությունը: Աշխատանքում հեղինակն անդրադարձել է տնտեսության գլոբալացման ժամանակակից գործընթացներում զբոսաշրջության դերին և նշել, որ վերջինս կարևոր ազդեցություն է ունենում ազգային ինքնության ձևավորման գործընթացի վրա, նպաստում է տարբեր սոցիալական և էթնիկ հանրույթների ինտեգրմանը և մերձեցմանը: Զբոսաշրջության, ինչպես և տնտեսության մյուս ոլորտներում գլոբալացման միտումներն արտահայտվում են պետությունների և սոցիալական կազմակերպությունների համագործակցության միջոցով՝ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում: Զբոսաշրջության ոլորտում գլոբալացման գործընթացին բնորոշ են տեղեկատվական և հեռահաղորդակցական նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը, մարքեթինգային նոր մեթոդների մշակումը, առցանց ռեժիմում ծառայություններ մատուցելու նպատակով համացանցի ընձեռած հնարավորությունների գործադրումը:

Աշխատանքում կատարվել է զբոսաշրջային ոլորտի պետական կարգավորման միջազգային փորձի ուսումնասիրություն ՀՀ-ում տեղայնացման հնարավորությունները բացահայտելու նպատակով, որի արդյունքում կատարվել է եզրահանգում. որ այս բնագավառի զարգացումը կախված է զբոսաշրջության ոլորտում պետության կողմից վարվող քաղաքականության արդյունավետությունից:


Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի զարգացման և կառավարման հիմնախնդիրները»** գլխում կատարվել են ՀՀ և Արցախի Հանրապետության զբոսաշրջության ոլորտի զարգացման արդի վիճակի վերլուծություն և գնահատում, բացահայտվել են առկա խնդիրները, ներկայացվել է կառավարման արդի վիճակը:

Զբոսաշրջության զարգացման բնագավառում տարվող պետական քաղաքականության շնորհիվ, ինչպես նաև մասնավոր հատվածի իրականացրած բազմաթիվ նախաձեռնությունների արդյունքում անցած տարիներին և՛ Հայաստանում, և՛ Արցախում արձանագրվել է զբոսաշրջային այցելությունների զգալի աճ (գծ. 1):



Գծապատկեր 1. Հայաստան կարարած ներգնա զբոսաշրջային այցելությունների աճի շարժընթացը 2003 - 2016 թթ³.

Այսպես՝ եթե 2012 թ. ՀՀ այցելությունների թիվը 843,330 հազ. մարդ էր, ապա վերջին հինգ տարիներին ցուցանիշն աճել է 1,5 անգամ՝ կազմելով 1,259 մլն մարդ:



Գծապատկեր 2. 2010–2015 թթ. Արցախի Հանրապետություն այցելած միջազգային զբոսաշրջիկների թիվը⁴


Ինչպես երևում է գծապատկերից Արցախ այցելած զբոսաշրջիկների թիվը 2015 թ. ավելացել է մոտ 3000 մարդով:

Զբոսաշրջության ոլորտի արդյունավետ գործունեության առաջնային և կարևոր խնդիրներից են ենթակառուցվածքների զարգացումը և գործունեության բարելավումը:

³ Զբոսաշրջություն. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն: <http://mineconomy.am/hy/89>

⁴ ARKA News Agency. Tourism. <http://arka.am/ru/news/tourism/>

Վերջին տարիներին ՀՀ զբոսաշրջության ոլորտում արձանագրվել է ներդրումների աճ համապատասխան ենթակառուցվածքների զարգացման նպատակով. կառուցվել են նոր հյուրանոցներ, սննդի օբյեկտներ, ձեռք են բերվել բարձրակարգ տրանսպորտային միջոցներ: Նշվել է նաև միջազգային չափանիշներին համապատասխանող «Զվարթնոց» օդանավակայանի նոր տերմինալի և «Շիրակ» օդանավակայանի շահագործումը: 2008–2015 թթ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների թիվն աճել է 42%-ով, ննջատեղերի թիվը՝ 86%-ով, ինչն էլ զգալիորեն նվազեցրել է ՀՀ հյուրանոցային տնտեսության օբյեկտների զբաղվածությունը⁵: Հանրային սննդի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2015 թ. կազմել է 1,3%, իսկ ծառայությունների ընդհանուր ծավալում՝ 6%՝ գերազանցելով կացության ցուցանիշը, համապատասխանաբար՝ 0.9 և 3.7%-ով: 2014 թ. համեմատությամբ 2015 թ. հանրային սննդի տեսակարար կշիռն աճել է 21.4%-ով և կազմել մոտ 55.3 մլրդ ՀՀ դրամ (գծ. 3):



Գծապատկեր 3. ՀՀ զբոսաշրջային ենթակառուցվածքների մաս կազմող ծառայությունների տեսակարար կշիռը ընդհանուր ծառայությունների մեջ 2015 թ.⁶

Զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացումը և կառավարման արդյունավետությունն իրենց դրական ազդեցությունն են թողնում ամբողջ ոլորտի կառավարման գործընթացի, մասնավորապես՝ զբոսաշրջային փաթեթների կառուցվածքի բարելավման, սպառողական պահանջարկի բավարարման, նոր զբոսաշրջային ուղղությունների

⁵ www.armstat.am

⁶ Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից՝ համաձայն Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, Երևան, ԱՎԾ

տրանսպորտային հասանելիության, զբոսաշրջային նոր ձևերի զարգացման վրա, և դրանով իսկ ապահովվում է երկրի տնտեսական զարգացումը: Զբոսաշրջային ենթակառուցվածքների արդյունավետ կառավարումը թույլ կտա բարձրացնել տվյալ ոլորտի կազմակերպությունների գործունեության տնտեսական արդյունավետության մակարդակը:

Ըստ հեղինակի՝ ՀՀ զբոսաշրջային ենթակառուցվածքների արդի վիճակը հնարավորություն չի ընձեռում արդյունավետ զարգացնելու զբոսաշրջության ոլորտը՝ հատկապես մարզերում և համայնքներում: Հեղինակը կարծում է, որ զբոսաշրջության ոլորտի ենթակառուցվածքների զարգացման ապակենտրոնացումը հնարավորություն կտա պետություն – մասնավոր հատված համագործակցության միջոցով նպաստելու ՀՀ զբոսաշրջության զարգացման արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Ատենախոսությունում նշում է, որ զբոսաշրջության ոլորտի կայուն զարգացումը և արդյունավետ կառավարումը մեծ նշանակություն ունեն նաև Արցախի Հանրապետության տնտեսության զարգացման համար: Արցախի Կառավարության առաջնային խնդիրներից է զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանն ու ոլորտի կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների ընդլայնումը:


Ատենախոսության երրորդ՝ **«Զբոսաշրջության ոլորտի կառավարման համակարգի բարելավման ուղիները»** գլխում ամփոփվել և համադրվել են ատենախոսության նախորդ երկու գլուխներում կատարված ուսումնասիրության արդյունքները, և, ստանալով ընդհանրական պատկեր, մատնանշվել են ՀՀ-ում զբոսաշրջության կառավարման համակարգի զարգացման գերակայությունները: Հեղինակը մշակել և առաջարկել է ՀՀ-ում զբոսաշրջային կլաստերի ձևավորման և կառավարման մոդել: Կարևորելով զբոսաշրջության ոլորտի զարգացման նպատակով կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը՝ ատենախոսն առաջարկել է ստեղծել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը կից Զբոսաշրջային ազգային գործակալություն:

Աշխատանքում իրականացվել է համակողմանի SWOT վերլուծություն, որի արդյունքները թույլ են տվել բացահայտել ՀՀ զբոսաշրջության արդյունավետ կառավարման գերակայությունները, մասնավորապես՝


- ՀՀ Կառավարության կողմից զբոսաշրջությունը որպես գերակա ճյուղ սահմանելը, ոլորտի օրենսդրական կարգավորումը և զբոսաշրջային կլաստերների ձևավորումը թույլ են տալիս առաջարկել կառավարման մոդելի փոփոխություն՝ կառավարման համապատասխան կառուցվածքով,
- զբոսաշրջային կլաստերների ձևավորումը հնարավորություն կտա նվազեցնելու տարածքային անհամաչափ զարգացումը, նպաստելու ենթակառուցվածքների զարգացմանը և մրցունակ գնային քաղաքականության մշակմանը,
- խթանել մասնավոր ներդրումները, զարգացնել մրցունակ զբոսաշրջային ոլորտի ենթակառուցվածքները,
- բարձրացել երկրի զբոսաշրջության գրավչության մակարդակը՝ հիմնվելով ոլորտի ոչ ավանդական ձևերի զարգացման ներուժի և բարենպաստ կլիմայական պայմանների վրա,
- մշակել և առաջարկել բազմատեսականացված զբոսաշրջային փաթեթներ պատմամշակութային հարուստ ժառանգության և ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ:

SWOT վերլուծության արդյունքները հիմք են տվել եզրահանգելու, որ զբոսաշրջության զարգացման և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է կիրառել համալիր մոտեցում, մասնավորապես՝ զբոսաշրջային կլաստերի ձևավորման միջոցով: Այդ նպատակով հեղինակը մշակել և առաջարկել է ՀՀ-ում զբոսաշրջային կլաստերի ձևավորման և կառավարման մոդել (գծ. 4):

Առանձին զբոսաշրջային կազմակերպությունների գործունեության փոխկապվածությունը կնպաստի դրանց համախմբմանը կլաստերներում, որոնք էլ հետագայում կվերածվեն զբոսաշրջային միավորումների: Առաջարկվող մոտեցումն ավելի արդյունավետ է կդարձնի զբոսաշրջային ոլորտի կառավարումը: Վերոնշյալ առաջարկով կլաստերների ստեղծման և ձևավորման նախադրյալները քննարկվել են Սյունիքի մարզի պարագայում, որտեղ առկա են բնական ռեսուրսներ, պատմամշակութային հուշարձաններ և կրթական հաստատություններ, ենթակառուցվածքային ներուժ (գծ. 5):




Գծապատկեր 4. Զրուսաշրջային կլաստերի ձևավորման և կառավարման առաջարկվող մոդել⁷



Գծապատկեր 5. Սյունիքի մարզում առաջարկվող զբոսաշրջային կլաստերի կառուցվածք⁸

⁷ Գծանկարը կազմել է հեղինակը:
⁸ Գծանկարը կազմել է հեղինակը:

Զբոսաշրջության ոլորտում արդյունավետ պետական քաղաքականությունը միջազգային զբոսաշրջային շուկայում երկրի գավառային երաշխիքն է: Սույն ատենախոսության շրջանակներում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հեղինակը ներկայացրել է ՀՀ-ում զբոսաշրջության ոլորտի կառավարման համակարգ, որի շրջանակներում իրականացվող գործառույթները և միջոցառումները լիովին չեն ապահովում զբոսաշրջության ոլորտի զարգացման այն տեմպերը, որոնք թույլ կտան ավելի ճանաչելի դարձնել Հայաստանը միջազգային զբոսաշրջային շուկայում, զարգացնել ներքին և ներգնա զբոսաշրջությունը, ինչպես նաև ավելացնել զբոսաշրջիկների հոսքը դեպի Հայաստան: Ելնելով խնդրի կարևորությունից և հրատապությունից՝ ոլորտի բարելավման և հետագա զարգացման պետական քաղաքականությունը իրագործելու համար առաջարկվել է ստեղծել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը կից Զբոսաշրջության ազգային գործակալություն (գծ. 6):



Գծապարկեր 6. Առաջարկվող Զբոսաշրջության ազգային գործակալության կառավարման կազմակերպական կառուցվածքը⁹

⁹ Գծանկարը կազմել է հեղինակը: Այս գաղափարը հեղինակն առաջարկել է հիմնավորել է դեռ մինչև Զբոսաշրջության պետական կոմիտեի ստեղծումը. Տե՛ս Կարապետյան Ս. Ս., ՀՀ զբոսաշրջության ոլորտի կառավարման կազմակերպական կառուցվածքի զարգացման միտումները// «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Եր., «Տնտեսագետ», 2016 թ., N 3, էջ 106-112:

Վերոնշյալ գործակալության բաժիններն են՝ զբոսաշրջային ծրագրերի և նախագծերի, պլանավորման և զարգացման, միջազգային համագործակցության, ներքին և միջազգային զբոսաշրջության զարգացման, մարքեթինգային ծառայության և իրավաբանական: Զբոսաշրջության ազգային գործակալության լիազորություններն են՝

- գործակալության իրավասություններին առնչվող հարցերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվության ստացումը զբոսաշրջության ազգային որոշումների ընդունման համար սահմանված կարգով,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց պարզաբանումների տրամադրումը Զբոսաշրջության ազգային գործակալության իրավասությունների հետ կապված հարցերի վերաբերյալ,
- գիտական կազմակերպությունների, հետազոտողների և մասնագետների ներգրավումը Զբոսաշրջության ազգային գործակալության գործունեությանն առնչվող հարցերի քննարկման գործընթացներում,
- զբոսաշրջության ոլորտը համակարգող խորհրդատվական և փորձագիտական, այդ թվում՝ միջգերատեսչական մարմինների ստեղծումը:

Ատենախոսության «**Եզրակացություն**» բաժնում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, կատարվել են կարևոր եզրահանգումներ և առաջարկություններ.

1. Ժամանակակից աշխարհում զբոսաշրջությունը դիտարկվում է որպես երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն գործոն, որը մեծ ազդեցություն է ունենում տնտեսության զարգացմանը նպաստող այնպիսի առանցքային ճյուղերի վրա, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, տրանսպորտը և կապը, շինարարությունը և այլն՝ դրանով իսկ դառնալով տնտեսական զարգացման կայունությունն ապահովող յուրահատուկ ոլորտ:

2. Զբոսաշրջության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առկա են բազմաթիվ սահմանումներ, որոնք, կարևորելով զբոսաշրջության որոշակի կողմերը, այնուհանդերձ, չեն անդրադառնում զբոսաշրջության՝ որպես սոցիալական ինստիտուտի հիմնախնդրին: Ելնելով վերոնշյալից՝ ատենախոսն առաջարկել է զբոսաշրջությունը դիտարկել որպես ժամանակակից տնտեսության սոցիալական ինստիտուտ, որն ունի ներքին կառուցվածք, փոխկապված տարրերի համակարգ և իրականացնում է տարա-

տեսակ գործառույթներ, որոնց միջոցով կատարվում են մարդկանց մշտական բնակության վայրից ժամանակավոր տեղափոխություններ՝ ճանաչողական, ժամանցային, գործնական, ֆիզիկական զարգացման, հոգևոր և այլ նպատակներով:

3. Զբոսաշրջության ազդեցությունը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա դիտարկվել է տարբեր տեսանկյուններից: Այս խնդրին վերաբերող մոտեցումների վերլուծության արդյունքում աշխատանքում առանձնացվել են զբոսաշրջության ազդեցության հետևանքները տնտեսության զարգացման առումով, մասնավորապես՝ զբոսաշրջային յոթ հիմնական բազմարկիչների (թողարկման, վաճառքի, եկամուտների, զբաղվածության, աշխատավարձի, պետական եկամուտների և արտահանման) ազդեցությունը տնտեսության վրա, նոր աշխատատեղերի ստեղծումը և զբաղվածության աճը, օտարերկրյա ներդրումների ներգրավումը և դրանց արագ փոխհատուցման հնարավորությունը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը, ենթակառուցվածքների զարգացումը և այլն:

4. Գլոբալացման գործընթացների արդյունքում Հայաստանը դարձել է միջազգային և տարածաշրջանային զբոսաշրջային կազմակերպությունների անդամ, ինչի շնորհիվ մեծացել են ՀՀ-ում զբոսաշրջության զարգացման և օտարերկրյա ներդրումների ներգրավման հնարավորությունները:

5. Ներկայումս կիրառվում է զբոսաշրջության ոլորտի պետական կարգավորման երեք մոդել, որոնք միմյանցից տարբերվում են պետության մասնակցության տեսակարար կշռով: Մեր երկրում ընտրվել է զբոսաշրջության կառավարման այնպիսի մոդել, ըստ որի զբոսաշրջության պետական կարգավորման գործառույթն իրականացնում է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կազմում գործող Զբոսաշրջության պետական կոմիտեն:

6. Հիմնավորվել են ՀՀ-ում զբոսաշրջային ձևերի զարգացման և բազմատեսականացման հնարավորությունները, առաջարկվել է զարգացնել ագրոզբոսաշրջությունը, էկոզբոսաշրջությունը, գյուղական և իրադարձային զբոսաշրջությունները: Դա հատկապես կարևորվել է ներգնա զբոսաշրջության զարգացման տեսանկյունից:

7. ՀՀ տնտեսական համակարգում զբոսաշրջության ոլորտի տեղի ու դերի գնահատումը, կառավարման առկա հիմնախնդիրների բացահայտումը, դրանց լուծման

ուղիների որոշումը պետք է հիմնվեն զբոսաշրջային ենթակառուցվածքների վիճակի համալիր վերլուծության արդյունքների վրա: Ըստ այդմ բացահայտվել են պետություն – մասնավոր հատված համագործակցության միջոցով զբոսաշրջային ոլորտի ենթակառուցվածքների զարգացման հնարավորությունները, ինչը կնպաստի ՀՀ զբոսաշրջության զարգացման արդյունավետության բարձրացմանը և տարածքային համաչափ զարգացմանը:

8. ՀՀ զբոսաշրջային ենթակառուցվածքների ոչ լիարժեք գործադրումը հնարավորություն չի տալիս արդյունավետ զարգացնելու ՀՀ զբոսաշրջության ոլորտը՝ մասնավորապես, մարզերում և համայնքներում: Զբոսաշրջության ոլորտի ենթակառուցվածքների զարգացման ապակենտրոնացումը թույլ կտա պետություն – մասնավոր հատվածի միջոցով նպաստել ՀՀ զբոսաշրջության զարգացման արդյունավետության բարձրացմանը:

9. ՀՀ-ն ու Արցախի Հանրապետությունն ունեն հարուստ պատմամշակութային ժառանգություն, հիասքանչ բնություն և հյուրասեր ժողովուրդ: Նշված նախապայմանները թույլ են տալիս զարգացնել զբոսաշրջությունը Արցախում, ինչն էլ, վերջին հաշվով, նպաստում է կայուն տնտեսական առաջընթացին, շրջակա միջավայրի պահպանությանը, աղքատության հաղթահարմանը և ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը:

10. ՀՀ զբոսաշրջության ոլորտի արդյունավետ կառավարման գերակայությունները որոշելու համար ատենախոսությունում կատարվել է համակողմանի SWOT վերլուծություն, որի արդյունքում բացահայտվել են զբոսաշրջության բնագավառի զարգացման արդյունավետ կառավարման նախադրյալները և ուղղությունները՝ ենթակառուցվածքների զարգացում, մրցունակ գնային քաղաքականության մշակում, ներդրումների խթանում, զբոսաշրջության ոչ ավանդական ձևերի զարգացում, բազմատեսականացված փաթեթների և զբոսաշրջային կլաստերների ձևավորում:

11. Ատենախոսությունում հիմնավորվել է զբոսաշրջային կլաստերների ձևավորման անհրաժեշտությունը, ինչը թույլ է տվել առաջարկել ոլորտի կառավարման մոդելի փոփոխություն՝ համապատասխան կազմակերպական կառուցվածքով: Զբոսաշրջային կլաստերների կիրառումը կնպաստի տարածաշրջանի տնտեսական զարգացմանը,

ներդրումների ներգրավմանը, պետություն – մասնավոր հատվածի համագործակցությանը, տարածաշրջանների համաչափ զարգացմանը:

12. Կարևորելով ՀՀ զբոսաշրջային ոլորտի զարգացման կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը՝ առաջարկվել է ստեղծել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը կից Զբոսաշրջության ազգային գործակալություն՝ կառավարման կազմակերպական կառուցվածքով, մշակվել են գործունեության նպատակը և գործառույթները:

Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Կարապետյան Ս. Ս., Զբոսաշրջության ոլորտի կառավարման միջազգային փորձի վերլուծություն// Զարգացման ժամանակակից մարտահրավերներ: ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովի նյութեր: Եր., «Տնտեսագետ», 2014 թ., էջ 177-183:
2. Կարապետյան Ս. Ս., ՀՀ զբոսաշրջության ոլորտի առանձնահատկությունները և զարգացման միտումները// «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Եր., «Տնտեսագետ», 2015 թ. N 3, (39), էջ 79-87:
3. Կարապետյան Ս. Ս., Զբոսաշրջության ոլորտի ներկա վիճակը և կառավարման համակարգը ՀՀ-ում// «Ֆինանսներ և էկոնոմիկա», Եր., 2016 թ., N 7-8 (191-192):
4. Կարապետյան Ս. Ս., Զբոսաշրջության ոլորտի օրենսդրական դաշտի առանձնահատկությունները ՀՀ-ում// «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Եր., 2016 թ., N 9-10 (193-194):
5. Կարապետյան Ս. Ս., ՀՀ և ԼՂՀ զբոսաշրջության հետագա զարգացման նախապայմանները, դրանց վերլուծությունն ու գնահատումը: «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Եր., «Տնտեսագետ», 2016 թ., N 2, (42), էջ 109-120:
6. Կարապետյան Ս. Ս., ՀՀ զբոսաշրջության ոլորտի կառավարման կազմակերպական կառուցվածքի զարգացման միտումները// «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի», Եր., «Տնտեսագետ», 2016 թ., N 3, (43), էջ 106-112:

КАРАПЕТЯН СУСАННА САМВЕЛОВНА

**ПРИОРИТЕТНЫЕ ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ УПРАВЛЕНИЯ
ТУРИСТИЧЕСКОЙ ОТРАСЛЬЮ
(ПО МАТЕРИАЛАМ РА)**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – „Экономика, управление хозяйством и его сферами”.

Защита диссертации состоится 25-го мая 2017 г., в 15³⁰ на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Туризм – один из факторов мирового экономического развития, способствующий устойчивому экономическому развитию, сохранению окружающей среды, равномерному региональному экономическому развитию, преодолению бедности, сохранению историко-культурного наследия и национальных традиций. Туризм в РА объявлен приоритетной отраслью экономики, согласно последним данным, по темпам и результатам развития, одна из динамично развивающихся отраслей. Опыт разных стран показывает, что успех развития туризма напрямую зависит от того, как на государственном уровне воспринимается эта отрасль, насколько она пользуется государственной поддержкой. Анализ исследований свидетельствует о важности выбора модели государственного управления туристической отраслью. Констатируя проводимые широкомасштабные меры по совершенствованию управления этой отраслью, следует отметить о ряде нерешенных проблем. Это, прежде всего, проблема совершенствования системы управления туристической отрасли. Успешное решение данных задач – залог становления, функционирования и эффективного управления туристической отраслью РА.

Целью исследования является выявление проблем совершенствования управления туристической отраслью РА и предоставление рекомендаций на пути решения данных задач. Для реализации этой цели в работе поставлены следующие задачи:

- исследовать основные понятия по управлению туристической отраслью,
- изучить теоретико-методологические основы управления туризмом,
- исследовать и оценить роль и экономическое значение туризма в современных процессах глобализации,
- анализировать международный опыт управления туризмом и выявить возможности применения в РА,
- выявить и оценить современное состояние развития и особенностей управления туристической отрасли РА,
- анализировать и оценить возможности и тенденции развития системы управления туризмом РА,
- анализировать законодательно-правовое поле, регулирующее туристическую отрасль,
- разработать приоритетные пути совершенствования управления туристической отраслью, а также подходы к институциональным реформам.

В ходе исследования получены результаты теоретико-методической и практической значимости, из которых научную новизну содержат следующие:

1. Обоснованы и представлены возможности развития и диверсификации видов туризма, в частности, агротуризма, сельского туризма, экотуризма и событийного туризма.
2. Исследованы и выявлены масштабные и структурные тенденции изменений в услугах въездного и выездного туризма и воздействие на развитие экономики.
3. С целью устойчивого развития туризма РА разработана и представлена модель туристского кластера с составными формирования и организационной структурой управления.
4. Обоснована необходимость формирования Национального туристического агентства при Министерстве экономического развития и инвестиций РА. Определена цель деятельности агентства, представлена организационная структура и функции.

KARAPETYAN SUSANNA SAMVEL

**PRIORITIES OF IMPROVEMENT OF TOURISM SECTOR MANAGEMENT
(BASED ON RA MATERIALS)**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.02 –“Economics, Management of the Economy and its Spheres”.

The defence of the thesis will take place on May 25, 2017 at 15³⁰ o'clock at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics,
to: 128 Nalbandyan str., Yerevan, RA, 0025.

RESUME

Tourism is one of the factors of world economic development, which is contributing to sustainable economic development, preserving of the environment, equal regional economic development, overcoming poverty, preserving the historical and cultural heritage and national traditions. According to the latest data, paces and results of development tourism has been declared a priority sector of the economy and one of the dynamically developing industries of the Republic of Armenia. The experience of different countries shows that the success of tourism development depends on how the state perceives this sector and to what extent it receives state support. The research analysis shows the importance of choosing a model of public management of the tourism sector. Noting the ongoing large-scale measures to improve the management of this sector, we should note a number of unresolved problems. This is, first of all, the problem of improving the management system of the tourism industry. Successful solution of these tasks is a prerequisite for the establishment, functioning and effective management of the RA tourism sector. The objective of the research is to identify the problems of the improvement of tourism sector management of the Republic of Armenia and to provide recommendations on the way of solving these problems. To achieve this objective, the following tasks are set in the work:

- explore the basic concepts of tourism sector management,

- study the theoretical and methodological foundations of tourism management,
- to study and evaluate the role and economic importance of tourism in the modern processes of globalization,
- to analyze the international experience of tourism management and to identify the possibilities of application in RA,
- identify and assess the current state of development and management features of the RA tourism sector,
- analyze and assess the opportunities and trends of the development of RA tourism management system,
- analyze the legislative and legal framework regulating the tourism sector,
- develop priorities to improve the tourism sector management, as well as to develop approaches for institutional reforms.

In the course of the research, the results of theoretical, methodological and practical significance were obtained, of which scientific novelty contains the following:

1. As a result of the research, the opportunities for the development and diversification of the types of tourism, in particular, agritourism, rural tourism, ecotourism and event tourism, are justified and presented.
2. Scaled and structural trends in the changes of inbound and outbound tourism and the impact on the development of the economy have been revealed and characterized.
3. With the aim of sustainable development of tourism in Armenia, a model of a touristic cluster with composite formations and an organizational management structure has been developed and presented.
4. The necessity of forming the National Tourism Agency under the Ministry of Economic Development and Investments of the Republic of Armenia is substantiated. The objective of the agency's activities is determined, the organizational structure and functions are presented.

A handwritten signature in black ink, appearing to read 'N. Avakyan', is located in the bottom right corner of the page.